ԵԴ2/6395/02/26
(ՎԴ/9185/05/26)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

05 հունիսի 2026 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեղնյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ԵԴ2/6395/02/26 (ՎԴ/9185/05/26) գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 5-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Ա. Ի. 2026 թվականի հունիսի 04-ին հայցադիմում է ներկայացրել (վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի միջոցով) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ պատասխանողին հայցվորին Հայաստանի Հանրապետության 2026 թվականի հունիսի 07-ին կայանալիք ՀՀ

Ազգային ժողովի ընտրություններին ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկելուն պարտավորեցնելու պահանջի մասին[1]:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 4-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին[2]:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 5-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան[3]:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունիսի 5-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, 206-րդ հոդվածին, 208-րդ հոդվածի 1-ին մասին, 209-րդ հոդվածի 6-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 10-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերին, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ թիվ ԵԴ2/5108/02/26 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը 2026 թվականի հունիսի 4-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Տվյալ դեպքում Դատարանը փաստում է, որ հայցվորը չի վիճարկում ընտրողների ռեգիստրում առկա որևէ անճշտություն և չի պահանջում փոփոխություն կատարել ընտրողների ռեգիստրում, քանի որ վերջինս չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված և Հայաստանի Հանրապետության որևէ համայնքում հաշվառված անձ:*

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 3-21:
[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 1-4:
[3] Տե՛ս դատական գործը, թերթեր 100-106:

Ընդհակառակը, հայցվորը Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունի, իսկ ՀՀ ընտրական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողները չեն ընդգրկվում ընտրողների ռեգիստրում:

Այսպիսով, հայցվորի պահանջը չի վերաբերում ընտրողների ռեգիստրին, այլ հայցվորի պահանջը բխում է ՀՀ ընտրական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասից, որով պաշտպանվում է Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողի՝ ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու իրավունքը, որպիսի նորմի բովանդակությունից հետևում է, որ լիազոր մարմնի կողմից իրականացվող գործողության վերջնական արդյունքը ոչ թե ընտրողների ռեգիստրում տվյալների փոփոխությունն է, այլ կոնկրետ ընտրության համար ընտրողի ընդգրկումը համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:

(…) Դատարանը եզրահանգում է, որ սույն վեճը հանդիսանում է ընտրողների ցուցակի ճշգրտման վերաբերյալ վեճ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով ենթակա է քննության ոչ թե վարչական դատարանի, այլ ընդհանուր իրավասության դատարանի կողմից»[4]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասին, 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09, 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի հունիսի 5-ի որոշմամբ գտել է, որ հայցադիմումով ներկայացված հիմնական պահանջը վերապահված է քննության ՀՀ վարչական դատարանին՝ նշելով հետևյալը. *«(…)*

[4] Տե՛ս դատական գործը, թերթեր 51-59:

Դատարանը գտնում է, որ Վարչական դատարանը ՎԴՕ 208-րդ հոդվածի կարգավորման վերաբերյալ կատարել է իրավաչափ եզրահանգում առ այն, որ բացառությամբ ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերի, ընտրական մյուս բոլոր վեճերը ենթակա են քննարկման ՀՀ վարչական դատարանի կողմից, սակայն եզրահանգումն առ այն, որ ներկայացված վեճը հանդիսանում է ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործ, չի համապատասխանում ինչպես ներկայացված հայցապահանջին, այնպես էլ դրա հիմքում դրված փաստերին, որոնք հանգում են հետևյալին՝

- *որպես պատասխանող նշված է ՀՀ Ներքին գործերի նախարարությունը, որը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն, հանդիսանում է վարչական մարմին.*
- *բովանդակային առումով ներկայացված պահանջը ձևակերպված է որպես վարչական մարմնի կողմից կոնկրետ գործողություն կատարելու պահանջ, այն է՝ հայցվորին ժամանակավորապես ընդգրկել ՀՀ 07.06.2026թ. կայանալիք ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակում.*
- *որպես փաստական հիմք վկայակոչվել է այն, որ հայցվորը դիմել է ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը նշված ցուցակում ընդգրկվելու համար, սակայն մի դեպքում ստացել է պատասխան առ այն, որ անհրաժեշտ է ներկայացնել սահմանված ձևի դիմում, իսկ այնուհետև մերժվել է այն հիմնավորմամբ, որ դիմումը ապահովված չի եղել էլեկտրոնային ստորագրությամբ:*

Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ ընտրողների ցուցակներում տեղ գտած, այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող անճշտությունները վերացնելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին, ներառյալ էլեկտրոնային եղանակով: (...):

Նշված նորմի բովանդակությունից հետևում է, որ ընտրողների ցուցակում պետք է եղած լինի անճշտություն անձի վերաբերյալ, որի ճշգրտման նպատակ է հետապնդում հայցվորը, մինչդեռ սույն հայցի պարագայում խոսքը վերաբերել է Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառությանը, որը ենթադրում է առաջնային գործողություն՝ ուղղված ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելուն, ինչն իր հերթին կատարվում է համապատասխան անձի դիմումի հիման վրա և նախքան ընդգրկվելու

հարցի լուծումը խոսք չի կարող լինել անճշտության մասին: Մասնավորապես՝ համապատասխան անձի կողմից դիմում չներկայացնելու պարագայում, ըստ Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, չի ենթադրվում վարչական մարմնի պարտականությունը կամ գործողությունը՝ վերջինիս ցուցակում ընդգրկելուն, որի կատարված չլինելու կամ կատարման դեպքում որևէ փվյալի անհամապատասխանության պարագայում միայն կարող է խոսք լինել անճշտության և դրա ուղղման մասին:

Նշվածից հետևում է, որ ինչպես Ծառայությանն ուղղված դիմումը, այնպես էլ Ծառայության պատասխանը չեն բովանդակում որևէ հիմք առ այն, որ վարչական մարմնից ակնկալվել է ընտրողների ցուցակների ճշգրտման գործողություն, որպիսի հանգամանքով պայմանավորված, ըստ ՎԴՕ 208-րդ հոդվածի 1-ին մասի և դրա վերաբերյալ Վարչական դատարանի հիմնավոր եզրահանգման, գործում է վարչական դատարանի կողմից համապատասխան վեճը քննելու պահանջը, այսինքն՝ սույն վեճը ենթակա է քննության ՀՀ վարչական դատարանի կողմից»[5]:

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/9185/05/26 գործն ըստ Ա. Խ. հայցի ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ պատասխանողին հայցվորին Հայաստանի Հանրապետության 2026 թվականի հունիսի 07-ին կայանալիք ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

[5] Տե՛ս դատական գործը, թերթեր 65-69:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (…) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(…)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...)»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 28-րդ գլխում ընդգրկված 206-րդ հոդվածի համաձայն՝ *«Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերը Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում ընտրական ու հանրաքվեին մասնակցելու իրավունքների խախտման վերաբերյալ ներկայացված հայցադիմումների հիման վրա՝ սույն գլխին համապատասխան հարուցված գործերն են (այսուհետ՝ ընտրական գործ)»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ընտրական գործերը միանձնյա քննում և լուծում է վարչական դատարանի դատավորը, բացառությամբ՝*

1) տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումները վիճարկելու, թեկնածուների ու կուսակցությունների ընտրական ցուցակները (դրանցում ընդգրկված թեկնածուներին), թեկնածուներին գրանցելու, չգրանցելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ վարչական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի, որոնք ըստ էության քննում և լուծում է վարչական դատարանը՝ կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով.

2) ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերի, որոնք սույն օրենսգրքով սահմանված կարգով քննում է համապատասխանաբար մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կամ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ ըստ պատասխանողի գտնվելու վայրի»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Ընտրողների և հանրաքվեի մասնակիցների ցուցակներում տեղ գրած՝ հայցվորի անձին վերաբերող անճշտությունները վերացնելու, հայցվորին ցուցակում ընդգրկելու վերաբերյալ վեճերով հայցադիմումները կարող են ներկայացվել ցանկացած ժամանակ: Այդ հայցադիմումները քննվում և լուծվում են այնպիսի ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը, բայց ոչ ուշ, քան հայցադիմումը սրանալուց հետո՝ եռօրյա ժամկետում»:*

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը մշտապես վարվող փաստաթուղթ է, որը կազմվում է ըստ մարզերի և համայնքների: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության քնակչության պետական ռեգիստրում ընդգրկված, Հայաստանի Հանրապետության որևէ համայնքում հաշվառված և ընտրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:*

Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող՝ քաղաքացիություն չունեցող ընտրողները Հայաստանի

Հանրապետության ընտրողների ռեգիստրում չեն ընդգրկվում, որը չի սահմանափակում նրանց ընտրելու իրավունքը»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է լիազոր մարմինը: Լիազոր մարմինը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար»:*

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի, որում ընդգրկվում են սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխան ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք, որոնք քվեարկության օրվան նախորդող 6 ամսվա ընթացքում ունեցել են անձը հաստատող վավեր փաստաթուղթ»:*

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողներն Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցելու համար քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն, լիազոր մարմին ներկայացնում են դիմում ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին՝ նշելով քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն: Լիազոր մարմինը դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողին ընդգրկում է քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և ծանուցում է դիմողին այդ մասին: Ծանուցման մեջ նշվում են գտնվելու վայրի ընտրական տեղամասի համարը և տեղամասային կենտրոնի հասցեն: Դիմումը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով: Էլեկտրոնային դիմումներն ապահովվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողի անունից դիմում ներկայացնելու դեպքում դիմումատուն պարտավոր է ներկայացնել նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր»:*

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ ընտրողների ցուցակներում տեղ գրած, այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող անճշտությունները վերացնելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին, ներառյալ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումները պետք է ապահովված լինեն էլեկտրոնային ստորագրությամբ: Լիազոր մարմինը դիմումն ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 9 օր առաջ սույն օրենսգրքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում վերացնում է անճշտությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին»:*

9. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության **ընտրողների ռեգիստրը** ըստ մարզերի և համայնքների կազմվող, մշտապես վարվող փաստաթուղթ է, որում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված, Հայաստանի Հանրապետության որևէ համայնքում հաշվառված և ընտրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողները Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում չեն ընդգրկվում, որը չի սահմանափակում նրանց ընտրելու իրավունքը: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի

ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի, որում ընդգրկվում են համապատասխան ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք, որոնք քվեարկության օրվան նախորդող 6 ամսվա ընթացքում ունեցել են անձը հաստատող վավեր փաստաթուղթ:

Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողները Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցելու համար քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն, լիազոր մարմին ներկայացնում են դիմում՝ ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին՝ նշելով քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն: Լիազոր մարմինը դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողին ընդգրկում է քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և ծանուցում է դիմողին այդ մասին:

Վերոգրյալից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողները Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում չեն ընդգրկվում, սակայն այն չի սահմանափակում նրանց ընտրելու իրավունքը, և վերջիններս Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցելու համար լիազոր մարմնին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով հնարավորություն ունեն ժամանակավորապես ընդգրկվելու ընտրողների ցուցակում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատարանի քննությանը վերապահված են ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերը, որոնցից օրենսդիրը, ի թիվս այլնի, բացառություն է սահմանել **ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերը**, որոնք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, ըստ պատասխանողի գտնվելու վայրի, քննության են ենթակա համապատասխանաբար մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կամ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից: Ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերը, ըստ էության, վերաբերում են նշված

ցուցակներում որոշակի անճշտությունների դեպքում դրանց ճշգրտմանը, այսինքն՝ տեխնիկական որոշակի թերություններ վերացնելուն, իսկ այդ ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ ծագած վեճն այդպիսին չէ:

Հետևաբար՝ ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու վերաբերյալ լիազոր մարմնին պարտավորեցնելու վերաբերյալ գործերը չեն կարող համարվել ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործեր, հետևաբար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նշված բացառության մեջ չեն ընդգրկվում:

10. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Ա. Ի. 2026 թվականի հունիսի 04-ին հայցադիմում է ներկայացրել (վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի միջոցով) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ պատասխանողին հայցվորին Հայաստանի Հանրապետության 2026 թվականի հունիսի 07-ին կայանալիք ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկելուն պարտավորեցնելու պահանջի մասին[6],

- ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 4-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ սույն վեճը հանդիսանում է ընտրողների ցուցակի ճշգրտման վերաբերյալ վեճ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով ենթակա է քննության ոչ թե վարչական դատարանի, այլ ընդհանուր իրավասության դատարանի կողմից[7],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի հունիսի 5-ի որոշմամբ գտել է, որ ինչպես Ծառայությանն ուղղված դիմումը, այնպես էլ Ծառայության պատասխանը չեն բովանդակում որևէ հիմք առ այն, որ վարչական մարմնից ակնկալվել է ընտրողների ցուցակների ճշգրտման գործողություն, որպիսի հանգամանքով պայմանավորված, ըստ ՎԴՕ 208-րդ հոդվածի 1-ին մասի և դրա վերաբերյալ Վարչական դատարանի հիմնավոր

[6] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

եզրահանգման, գործում է վարչական դատարանի կողմից համապատասխան վեճը քննելու պահանջը, այսինքն՝ սույն վեճը ենթակա է քննության ՀՀ վարչական դատարանի կողմից[8]:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ հայցվորը, դիմելով դատական պաշտպանության, ակնկալել է պարտավորեցնել լիազոր մարմնին՝ կատարելու որոշակի գործողություն, այն է՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի հունիսի 07-ին կայանալիք ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկել Ա. Ի.: Նշված պահանջը չի վերաբերում ընտրողների ցուցակների ճշգրտմանը, այսինքն՝ դրանում անճշտությունները վերացնելուն, այլ վերաբերում է նշված ցուցակում ընդգրկվելուն, այսինքն՝ լիազոր մարմնի կողմից որևէ գործողություն կատարելուն, որպիսի իրավահարաբերությունն ուղղված է հայցվորի ընտրական իրավունքի պաշտպանությանը և ենթակա է քննության ՀՀ վարչական դատարանի կողմից:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում ենք, որ Ա. Ի. հայցի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/9185/05/26 (ԵԴ2/6395/02/26) գործը պետք է ուղարկել ՀՀ վարչական դատարան:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ԵԴ2/6395/02/26 (ՎԴ/9185/05/26) գործն ըստ Ա. Ի. հայցի ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ պատասխանողին հայցվորին Հայաստանի Հանրապետության 2026 թվականի հունիսի 07-ին կայանալիք ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ուղարկել ՀՀ վարչական դատարան:

---

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ